

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ ԹԻՎ 10
ՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԽՈՐՀՐԴ ՆԻՍՏ
2024 թ. ՀՈՒՆԻՍԻ 27

27.06 .2024թ.

Մանկավարժական խորհրդի նիստին մասնակցում էին 16 ուսուցիչներ և 1 ծնող խորհրդի նախագահը /17 անդամ/

1. Ուսումնական հաստատության մանկավարժական խորհրդի նիստի օրակարգի հաստատում, նաև անդրադարձ նախորդ նիստին (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
2. 2023-2024 ուսումնական տարվա տնօրենի, մ/մ-ների նախագահների , դասղեկների մանկավարժական այլ աշխատողների (գրադարանավար , ԴԱԿ), հաշվետվությունների ներկայացման և հաստատման հարցը (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
3. 2023-2024 ուսումնական տարվա 4-րդ դասարանի սովորողներին հավաստագիր, 9-րդ դասարանի սովորողներին հիմնական կրթության վկայական, 12-րդ դասարանի սովորողներին պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու, գերազանց սովորողներին գովասանագրով պարգևատրելու հարցը (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
4. Հաստատության 2023-2024 ուսումնական տարվա 2-8-րդ, 9-11-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրվելու, հարցը (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
5. Ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվության, դասարանների կոմպլեկտավորման, ԿԱՊԿ ունեցող սովորողների հարցը (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
6. 2023-2024 ուսումնական տարվա սովորողներին՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքների ամփոփում, հաստատությունից սովորողի տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման (աշակերտական շարժի) հարցի ներկայացում (զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան)
7. 2023-2024 ուսումնական տարվա կատարած դաստիարակչական աշխատանքների հաշվետվություն (զեկուցող՝ տնօրեն, ԴԱԿ)
8. 2023-2024 ուս.ուտարվա գերազանց առաջադիմություն ցուցաբերած աշակերտների ցանկը:
9. 2023-2024 ուսումնական տարում 12-րդ դասարանի պետական ավարտական և 9-րդ ավարտական քննությունների ամփոփում /զեկուցող՝ տնօրեն Ն. Մարկոսյան /

Որոշեցին

1. Հաստատել մանկավարժական խորհրդի հունիսի 27-ին տեղի ունեցող օրակարգը:
- 2 Հաստատել 2023-2024 ուսումնական տարվա տնօրենի, մ/մ-ների, մանկավարժական այլ աշխատողների , դասղեկների հաշվետվությունները
3. 2023-2024 ուսումնական տարվա վերաքննություն չունեցող 4-րդ դասարանի սովորողներին հավաստագիր, 9-րդ դասարանի սովորողներին պետական նմուշի վկայական տալ՝ Գալստյան Մուշեղ, Հակոբյան Էլեն, Հակոբյան Մերի, Ղազարյան Եղիազար և Շահնազարյան Պայքար ,12-րդ դասարանի սովորողներին պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալ, գերազանց սովորողներին պարգևատրել գովասանագրով:

4. Դպրոցի 2023-2024 ուսումնական տարվա 2-8-րդ, 9-11-րդ դասարանների սովորողներին հաջորդ դասարան փոխադրել :

5. Հաստատել ուսումնադաստիարակչական աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունը, դասարանների կոմպլեկտավորումը, ինչպես նաև ԿԱՊԿ ունեցող սովորողի տարեվերջյան գնահատում:

6. Ամփոփել 2023-2024 ուսումնական տարվա սովորողների՝ երկրորդ կիսամյակի և տարեկան առաջադիմության արդյունքները, հաստատությունից սովորողի տեղափոխման, ազատման և հանրակրթության մեջ ընդգրկման (աշակերտական շարժի) հարցը:

7. Ամփոփել 2023-2024 ուսումնական տարվա ընթացքում կատարված դաստիարակչական աշխատանքների հաշվետվությունը:

8. Մանկավարժական խորհուրդը որոշեց , որ Արգինայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ-ում 2023-2024 ուսումնական տարում գովասանագրով պարգևատրել 6-րդ դասարանի աշակերտներ՝ Սոնա Ասատրյանին և Մանե Ստեփանյանին:

9. Դպրոցի շրջանավարտներին ըստ կրթական մակարդակների պետական նմուշի ավարտական փաստաթուղթ տալու մասին:

ՆԱԽԱԳԱՀ՝



Ն. ՄԱՐԿՈՍՅԱՆ

ՔԱՐՏՈՒՂԱՐ՝



Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ